

«ԽՈՐԵՆՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ» ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՀԱԼԵՊՈՒՄ

Ինչպես հայտնի է, 1985 թվականին Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը սրբատառ կոնդակով հանձնարարեց Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում ընդունելի համարել և սրբական պատարագ կատարել նաև «Խորենյան» երգեցողությամբ: Հայոց բազմադարյան պատարագի նորովի և յուրահատուկ այս մշակումը եկավ մի այլ տարբերակով գունազարդելու անմահանուն Կոմիտասի խորապես հայեցի ու առնական և ներհուն Եկմալյանի գեղեցկահյուս պատարագների երգեցողությունը: Հետևհետե Խորենյան պատարագը տարածում գտավ և մաս առ մաս կատարվեց, մանավանդ հատկապես այս նպատակով հրապարակված ձայնապնակի և ձայներիվի միջոցով:

Եվ ահա, ուրախությամբ տեղեկացանք, որ 1986 թվականի ապրիլի 5-ին և 6-ին «Խորենյան պատարագը» կատարվել է որպես «սրբական համերգ» Հալեպում՝ «Զվարթնոց» երգչախմբի կողմից՝ երգեհոնի նվագակցությամբ: Երգչախմբի գեղարվեստական ղեկավարն ու խմբավարն է Պողոս Ապաճյանը: Մոտ վաթսուն հոգուց բաղկացած երգչախումբը և անվանի մենակատարներ ոգևորությամբ ու վարպետությամբ երգել են «Խորենյան պատարագի» շուրջ քսան հատվածներ:

Գովելի և օրինակելի նախաձեռնություն:

ԹՂԹԱԿԻՑ